«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 19-01/02

ք.Երևան,Արշակունյաց 5. 417 սենյակ 30.08.2018թ. ժամը 15.00

Համաձայն, ԳԱԲ «Էլեկտրոմաշ» ՍՊԸ-ի տնօրեն Լուսինե Աղլամազյանի, «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝12.07.2018թ-ին և 14.07.2018թ-ին ստացված դիմումները,ԳԱԲ «Էլեկտրոմաշ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Սարգիս Միրաքյանի գործողությունների /անգործության/ փաստի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ս/թ-ի Օգոստոսի 30 -ին ժամը 15.00-ին՝ 10.08.2018թ-ի հետաձգված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՑՎԱԾ ԷԻՆ՝

Հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանը
Հանձնաժողովի անդամ՝Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝Ռուբեն Խալաթյանը
Դիմումատու ԳԱԲ «Էլեկտրոմաշ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Լուսինե Աղլամազյանը
ԳԱԲ «Էլեկտրոմաշ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Սարգիս Միրաքյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝

Հանձնաժողովի Նախագահ՝Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝Ռուբեն Խալաթյանը
ԳԱԲ «Էլեկտրոմաշ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Սարգիս Միրաքյանը
Դիմումատու ԳԱԲ «Էլեկտրոմաշ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Լուսինե Աղլամազյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 12.07.2018թ-ին և 14.07.2018թ-ին ստացված,ԳԱԲ «Էլեկտրոմաշ» ՍՊԸ-ի տնօրեն Լուսինե Աղլամազյանի դիմումների հետագա ընթացքը ապահովելու նպատակով, ԳԱԲ «Էլեկտրոմաշ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Սարգիս Միրաքյանի գործողությունների/անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, դիմումներում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարիչների վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը, ստուգեց կարգապահական վարույթի կողմերի և հանձնաժողովի անդամների ներկայությունը, այնուհետև հակիրճ ներկայացրեց բողոքի բովանդակությունը:«Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 4.6-րդ կետի համաձայն ձայնի իրավունք տրվեց ԳԱԲ «Էլեկտրոմաշ» ՍՊԸ-ի տնօրեն Լուսինե Աղլամազյանին, ով իր դիմումը համառոտ ներկայացրեց և ասաց, որ ավելացնելու ոչինչ չունի:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական Հանձնաժողովի անդամ Ա.Ադամյանը առաջարկեց, որպեսզի ըստ հերթականության առանձացվեն դիմում բարձացված պահանջները՝ առանձին անդրադարձ կատարելու և քննարկելու համար: Կարգապահական հանձնաժողովի անդամները

համաձայնեցին Ա.Ադամյանի արտահայտած կարծիքին և որոշեցին դիմումատուի պահանջների հերթականությունը, որոնք պետք է քննարկվեն:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը

առանձնացրեց բարձրացված հարցերը,այն էր՝

1.Ներկայացված հայտի չքննարկումը

2.Գնորդի հետ տարաժամկետված վճարման պայմանագրի կնքումը,երբ այդ պայմանը հրապարակայնորեն չի հայտարարվել:

3.Գնորդի կողմից վճարումը օրենքով սահմանված ժամկետից ուշ կատարելու պայմաններում,աճուրդը չկայացած չհայտարարելը:

4.Աճուրդը դատական կարգով բողոքարկելու փաստի առկայության պայմաններում բաշխման ծրագրի ներկայացման փաստը:

Հանձնաժողովի նախագահն առանձնացված հարցերի վերաբերյալ «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 4.6-րդ կետի համաձայն ձայնի իրավունք տվեց ԳԱԲ «Էլեկտրոմաշ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Սարգիս Միրաքյանի, ով նշեց, որ գույքագրումը կատարել է«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի պահանջների համապատասխան, որ կազմվել է գույքագրման ակտ, որը ստորագրվել է պարտապանի կողմից: Աճուրդը ևս կազմակերպվել է «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 76-րդ հոդվածին համապատասխան և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 8-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածներին սահմանած կարգով:Աճուրդը նույնպես կազմակերպել է օրենքով սահմանված ժամկետներում՝այդ թվում վերջին աճուրդի հայտարարվածլինելու փաստի վերաբերյալ նույնպես՝08.05.25018թ-ին նախապես ծանուցելով պարտապանին/Ծանուցումը և ուղարկման անդորագիրը ներկայացվում է/ և պարտատերերին: 31.05.2018թ-ին կայացված աճուրդի հիման վրա կազմվել է արձանագրություն, որտեղ նշել է, որ 30.05.2018թ-ին ներկայացված 2 հայտերից մեկը դատարանի կողմից իրեն է տրամադրվել հայտի ընդունման ժամ ՝ 16:45 նշումով: Սահմանված ժամկետից ուժ հայտը դատարան է ներկայացրել Անահիտ Բաղալյանը: Աճուրդի հայտարարության մեջ նշված է եղել, որ ցանկացողները հայտ կարող են ներկայացնել աճուրդի անկացմանը նախորդող 5 օրվա ընթացքում՝ ընդհուպ մինչև աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն: Հայտի ներկայացման ժամկետի խախտման մասին վկայում են նաև հայտատուի կողմից ներկայացրած աճուրդի մասնակցության վճարի և աճուրդ նախավճարի անդորրագրերը, որոնցում գումարի ընդունումը կատարվել է 30.05.2018թ. 16:31 և 16:33ժամերին: Աճուրդի մասին նույնիսկ հեռախոսազանգ եմ ունեցել պարտապանի հետ և նորից տեղեկացրել, որ անհրաժեշտ է, որպեսզի մուծի նախապես աճուդի նախավճարը: «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածում սահմանվում է, որ աճուրդի մասնակցելուն ցանություն ունեցող անձինք, աճուրդի ծանուցման մեջ սահմանված չափով, ժամկետներում և կարգով, մուծում են նախավճար, որի չափը չի կարող գերազանցել աճուրդում վաճառվող ամենաբարձր մեկնարկային գին ունեցող լոտի գնի մինչև հինգ տոկոսը: Հետևաբար հոդվածից բխում է, որ աճուրդին մասնակցություն ունենալու համար պետք է սահմանված ժամկետներում վճարվի նախավճարը, որը կատարվել է ժամկետների խախտումներով, հետևաբար աճուրդի մասնակցության հայտը չէր կարող ընդունվել,որի մասին ինչպես նշվեց 31.05.2018թ-ին կազմվել է արձանագրություն և տրամադրվել է հայտատուին/Արձանագրությունը,հայտը և վճարման անդորագիրը ներկայացվեց հանձնաժողովին/:Կառավարիչը նշեց նաև որ հայտատուն դիմել է նախավճարը ետ ստանալու համար և կառավարչի կողմից նախավճարները վերադարձվել են հայտը ներակայացնողին/:

Սնանկության գործով կառավարիչը տարաժամկետման վերաբերյալ հայտնեց,որ վճարման տարաժամկետման հարց չի եղել և չի քննարկվել,ըստ էության կատարվել է հետևյալը՝

31.05.2018թ-ին կազմվել է «Աճուրդի արդյունքների մասին» թիվ 1 արձանագրությունը,որտեղ գնման գնի վճարման ժամկետը սահմնվել է պայմանագրով նշված ժամկետում:04.06.2018թ-ին գնորդի կողմից ներկայացվել է գրավոր դիմում և խնդրել է գնման գնի /միանվագ/վճարման վերջնաժամկետ սահմանել 40 օր,քանի որ գումարը բավականին մեծ է:05.06.2018թ-ին

բողոքաբերի նշած «Սակարկությունների մասին»ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի հիմքով կնքվել է պայմանագիր,սահմանելով գնման գնի ամբողջ գումարի՝49 777 635 ՀՀ դրամ,վճարման համար 40 օրյա ժամկետ:Գնորդի կողմից վերը նշված սահմանված պայմանների կատարումից հետո 17.07.2018թ-ին կնքվել է «Անշարժ գույքի աճուրդով առուվաճառքի պայմանագիր»որի 2.2 կետում արձանագրվել է,որ գնորդի կողմից վճարումները կատարված են ամբողջությամբ՝ 52 397 511 ՀՀ դրամի չափով,սույն գործարքը իրականացվել է նոտարական կարգով և ստուգվել է նոտարի կողմից թե օրինականությունը,թե վճարումների փաստերը/ կառավարչի կողմից հանձնաժողովին ներկայացվեցին՝արձանագրությունը,դիմումը և պայմանագրերը/:

Բաշխման ծրագրի ներկայացման վերաբերյալ կառավարիչը հայտնեց,որ «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 80-րդ հոդված հիմքով իր կողմից,գույքի առուվաճառքի պայմանագրի կնքումից հետո, կազմվել է դրամական միջոցների բաշխման ծրագիր և սահմանված կարգով ծանուցելով պարտապանի և պարտատերերին՝10.07.2018թ-ին փոստային ծառայության միջոցով դեպոնացվել է դատարանում /ուղարկվել է դատարան,ծանուցումները և անդորագրերը ներկայացվում են/,12.07.2018թ-ին պարտապանից նույնպես փոստային ծառայության միջոցով ստացվել է աճուրդը անվավեր ճանաչելու մասին հայցադիմումի օրինակը,այսինքն բաշման ծրագիրը արդեն դատարանում էր,երբ ինքը ստացել է հայցադիմումը,որը դեռ վարույթ վերցված չէր և ինքը չեր կարող դրա մասին իմանալ,երբ կատարում էր իր օրենքով սահմանված պարտականությունները:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական Հանձնաժողովի անդամ Ռ.Խալաթյանը ձայնի իրավունք խնդրելով, հարցրեց դիմումատուին, թե արդյոք գույքագրմանը մասնակցել է և գույքագրման ակտը ստորագրել է, որի վերաբերյալ դիմումատուն դրական պատասխան տվեց: Հանձնաժողովի անդամ Ռ. Խալաթյանը մատնանշեց «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն գույքագրման արդյունքները ամփոփվում են գույքագրման ակտում, որը ստորագրում են կառավարիչը և գույքագրմանը մասնակցած պարտապանի ներկայացուցիչը: Պարտապանի ներկայացուցչի ստորագրությունը վկայում է, որ նա ներկա է եղել գույքգրմանը և երաշխավորում է, որ պարտապանին պատկանող ամբողջ գույքը գույքագրվել է: Գույքագրամն արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում պարտապանի ներկայացուցիչն ստորագրում է գույքագրման ակտը՝ կցելով դրան իր գրավոր առարկությունը: Հարց է առաջանում, եթե դիմումատուն ներկա է գտնվել գույքագրմանը, ստորագրել գույքագրման ակտը, ինչու չի նշել որ գույքն է իր անձնականը և որն է պատկանում կազմակերպությանը: Ըստ էության դիմումատուն իր համաձայնությունն է տվել գույքագրման ակտին և որև առակություն չի ներկայացրել:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական Հանձնաժողովի անդամ Ռ.Խալաթյանը ձայնի իրավունք խնդրելով, դիմումատուի կողմից առաջադրված այն հարցին, թե ինչու 10 օրյա ժամկետում չի կնքվել առքուվաճառքի պայմանագիր, առաջարկեց դիմումատուին ծանոթանալ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասին, որի համաձյան՝ «Աճուրդի մասին հրապարակային ծանուցմամբ, ***աճուրդի արդյունքների մասին արձանագրությամբ կամ պայմանագրով այլ ժամկետ սահմանված չլինելու դեպքում***աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցն աճուրդի արդյունքների մասին արձանագրությունն ստորագրելու օրվանից տասն օրվա ընթացքում պարտավոր է վճարել լոտի գինը՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումահո»: Իսկ տվյալ պարագայում, գնորդի և կառավարիչի կողմից ստորագրվել է պայմանագիր, որտեղ սահմանվել է ամբողջական գումարի վճարման այլ ժամկետ, այն է՝ քառասուն օր:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը առաջարկեց անդրադառնալ նաև դիմումատուի կողմից ՍԳԿԿ ԻԿԿ բերված երկրորդ բողոքին, որում նշվում է, որ չնայած իր կողմից աճուրդն անվավեր ճանաչելու հայցադիմում է ներկայացվել դատարան, ԳԱԲ «Էլեկտրոմաշ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Սարգիս Միրաքյանը դատարան ներկայացրել է միջանկյալ բաշխման ծրագիր: Տիգրան Հարությունյանը ներկայացրեց «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի առաջին մասը, որի համաձայն՝«Պարտապանի գույքի վաճառքից/օտարումից/ ստացված/փոխհատուցված/ միջոցները բաշխվում են սույն օրենքով սահմանված հերթականությամբ՝ կառավարչի կղմից հաստատված և պարտատերերի կողմից ընդունված միջանկյալ ծրագրին համապատասխան »: Հոդվածում որևէ նշում չկա այն մասին, որ աճուրդը անվավեր ճանաչելու հայցադիմում ներկայացվելու դեպքում, միջանկյալ միջոցների բաշխում չի կարող կատարվել:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը, առաջնորդվելով «Սնանկության մասին» , «Հրապարակային սակարկությունների մասին»ՀՀ օրենքների, «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով

կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի պահանջներով, հաշվի առնելով նիստի ընթացքում կատարված պարզաբանումները, մասնավորապես, որ կառավարչի գործողությունները կատարվել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 56-րդ, 75-րդ, 76-րդ հոդվածներին համապատասխան և պահպանվել են«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի պահանջները, առաջարկեց կարճել ԳԱԲ «Էլեկտրոմաշ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Սարգիս Միրաքյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՝

1. ԳԱԲ «Էլեկտրոմաշ»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Սարգիս Միրաքյանի նկատմամբ, ԳԱԲ «Էլեկտրոմաշ»ՍՊԸ-ի տնօրեն Լ.Աղլամազյանից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 12.07.2018թ-ին ստացված դիմում-բողոքի հիմքով՝ ԳԱԲ «Էլեկտրոմաշ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Սարգիս Միրաքյանի գործողությունների /անգործության/ օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարող է կարճվել «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի էթիկայի» կանոնների խախտման դեպքի /մեղքի/ բացակայության պատճառաբանությամբ:

վարքագծի վերաբերյալ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2.Սույն եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան